ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 0074-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով, 35-րդ հոդված 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0003-0001 կադաստրային ծածկագրից 0,02679հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

26 հունվարի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 0075-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՀԱԳՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի դ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վահագն Աղաջանյանի 2026 թվականի հունվարի 23-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.Անհատ ձեռնարկատեր Վահագն Աղաջանյանի /ՀՎՀՀ 66893288/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի Վահագնի-Ալավերդի խճուղի 11 սպասարկման օբյեկտ հասցեում (150քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 1-ին եռամսյակի (01.01.2026թ-31.03.2026թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

26 հունվարի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 0076-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՀԱԳՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի ա ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի 12-րդ մասի 1-ին կետի դ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վահագն Աղաջանյանի 2026 թվականի հունվարի 23-ի հայտը՝ **որոշում եմ**

1.Անհատ ձեռնարկատեր Վահագն Աղաջանյանի /ՀՎՀՀ 66893288/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի Վանաձոր-Ալավերդի խճուղի 11 սպասարկման օբյեկտ հասցեում (150քմ մակերեսով հիմնական շինությունում) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2026 թվականի 1-ին եռամսյակի (01.01.2026թ-31.03.2026թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

26 հունվարի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 0077-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով Վահագն Հայկի Աբրահամյանի (ծնվ.՝ 25.10.1949թ.) դիմումը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Լեռնապատ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17.03.1991թ. թիվ 2 որոշումից քաղվածքը, հաշվի առնելով, որ հողամասը սեփականության սուբյեկտի սխալի հետևանքով փոխանցվել է համայնքին, և կադաստրային քարտեզում արտացոլված է որպես համայնքային բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսք, սակայն հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշմամբ քաղաքացուն հատկացվել է որպես բնակելի կառուցապատման հողամաս, հողային ֆոնդի սկզբնական և ընթացիկ հաշվառման փաստաթղթերում այն հաշվառված է որպես բնակելի կառուցապատման սեփականություն, հատկացման օրվանից այն տնօրինում, տիրապետում, վճարում է հարկերը հատկացման հողամասին համապատասխան և այն փաստացի չի գտնվում համայնքի հողային հաշվեկշռում, հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ***

1. Սխալի ուղղման հիմքով հաստատել Փամբակ համայնք, գյուղ Լեռնապատում գտնվող 06-041-0177-0002 կադաստրային ծածկագրով 0,37359հա հողամասի սահմանները, համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծերի՝ փոխել իրավունքի սուբյեկտը և գործառնական նշանակությունը որպես քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման հողամասի:

2. Օրենքի ուժով ճանաչել Վահագն Հայկի Աբրահամյանի (ծնվ.՝ 25.10.1949թ.) սեփականության իրավունքը 06-041-0177-0002 կադաստրային ծածկագրով 0,37հա և հատկացվածից ավելի 0,00359հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 0078-Ա

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՌԿԱ ՔԱՂՎԱԾՔՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ***

Ուժը կորցրած ճանաչել 06-070-0363-0049 ծածկագրով անշարժ գույքի կադաստրային գործում առկա համայնքի ղեկավարի բոլոր որոշումները և պետական գրանցման համար հիմք ընդունել համայնքի ղեկավարի 21 նոյեմբերի 2025 թվականի N 1172-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

26 հունվարի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 0079-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՈՒՇ ՂՈՒԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա և բ ենթակետերով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի բ ենթակետի և 2-րդ կետի բ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անուշ Ղուլյանի 2026 թվականի հունվարի 22-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.Անհատ ձեռնարկատեր Անուշ Ղուլյանի /ՀՎՀՀ 66854135/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի 8 փողոց, տուն 1 հասցեում (33,3քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 1-ին եռամսյակի (01.01.2026թ-31.03.2026թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

29 հունվարի 2026
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 0080-Ա

«ՁՈՐԱԳԵՏ ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 23.1 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 134-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 14-րդ մասի, հիմք ընդունելով «ՁՈՐԱԳԵՏ ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի 2026 թվականի հունվարի 23-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.«ՁՈՐԱԳԵՏ ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 00871635/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Ձորագետ բնակավայրի 1 փ, 169 հասցեում Ձորագետ համայնքի անունը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն՝ 2026 թվականի համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

29 հունվարի 2026
գ. Փամբակ